


ԱՐՄ

ԱՐՄԱԿԱՆ

ԿՐՈՆԱԿԱՆ
ԲԱԼԿԱՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ



ՊԱՏՅՈՒՀԱԿՆ ՀՐԱՄԱՆԱԴՐԻ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏԻՒՔՅՈՒՆԻՆ

Խ. ՏՈՒՄ - ՆՈՐ ՏՐՁԱՆ 1947

digitised by

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Երես

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ		
— Յարուբեան զօրութիւնը .		161
ԿՐՈՆԱԿԱՆ		
— Սրբ՝ խօսքեր .	Ա.	164
— Յարուբեան խորհուրդը .	ՊՍԱԿ Վ.Բ. ԹՈՒՄԱՑԵԱՆ	168
ԿՐՕՆԱ-ԽՄԸՍՏԱԽՄԱԿԱՆ		
— Խորիմաս կեամբը .	ԹՐԳՄ. ՊԱՐԳՈՒ	170
ԿՐՕՆԱՊԱԼՏՄԱԿԱՆ		
— Նարեկը Հայ գրականութեան մեջ (4) .	ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱԿՊԵՏ	174
— Մահուան խորհուրդը .	Թ. Ա. Գ.	178
ՔԱՆԱՍՏԵՂՃԱԿԱՆ		
— Կ'իշնես ով Տէր .	ՀԱՅԿԱԶՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ	179
— Նախատօնակ .	ՄՈՒԽԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ	180
ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ		
— Եւրոպական ազգեցուրթիւնը հայերենի վրայ եւ լատինաբան հայերեն .	ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ	183
Քառանամեայ Յոբելեան Շահան Պերպերեանի .		187
Զատկի ուխտաւորութիւնը .		189
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ		
— Շնորհաւորական հեռազիւներ .	190	
— Գեր. Տ. Զարեն Եպս. մեր մեջ .	190	
— Ամսուեայ լուրեր .	191	

ԲԱԺՆԵ ԳՐՆ

ՍԻՈՆԻ Տարեկան բաժնեզիւնն է՝ բոլոր Եւկիրեներու համար՝ Անգլ. Շիլին 10
ԲԱԺՆ.ՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԱԿԻ է

Հասցէ՛ Rédaction de la Revue Arménienne SION

Պատրիարքական Առաքելութեան Կառավարութեան կողմէ հարցում է

Պատրիարքական Առաքելութեան Կառավարութեան կողմէ հարցում է

Ս Ի Ւ Ն

ԽԱ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1947

ՀԱՊԻԼ

ԹԻՒ 4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԶՈՐՈՒԹԻՒՆԸ



Ճանաչել զնա եւ զգօրութիւն Յարութեան նորա.
Փիլ. Գ. 10

Այս է Յարութեան պատգամն ու ազօթքը Պօղոսին, անոր՝ որ չէր տեսած Յիսուս, և սակայն ուժգնորէն զգացած ու ճանչցած էր անոր ոյժը։ Պօղոս մին էր այն մարդերէն, որ չեն գահանար զիանալով միայն ճշմարտութիւնը, եթէ չզգան անոր զօրութիւնը։ Վասնզի կեանքի մէջ ամէն իրողութիւն երկու երես ունի, արտաքին ձեռ և ներքին ոյժ, տեսանելի կերպարանի, և ներքին նշանակութիւն։

Քրիստոսի Յարութիւնը պէտք չէ մեզի զայ իբր մարգարէութիւն կամ խստում, որուն կրնանք հաւատալ, և կը յուսանք հասնիլ մահէն անդին։ Անմահութիւնը յայտնութիւն մը չէ միայն, մարդիկ առաջ ալ զիտէին և կ'ուզէին զիտնալ։ Յիսուս իր կեանքին իրադրծումով այդ աղօտ, անորոշ և հեռաւոր ապագան՝ շատ մօտ և ներկայ կեանքին բերաւ։ Հոգիի անմահութիւնը, որուն հաւատքը եթէ ամէն մարդու մարքին մէջ յստակ չէ, յայտնի է ամենուն ալ դործին և կեանքին մէջ։ Մեզմէ իւրաքանչիւրիս խորհուրդներն ու ձգտումները ուղղուած են դէպի ապագան, Մեծ անձանօքը, թէկ տարտամ ու յողդողդ, բայց օր մը դէմյանդիման զալու ստոյդ հայատքով։ Եթէ դժուար է հաւատալ Յարութեան, բայց աւելի դժուար է չհաւատալ անոր։ Կեանքը յաւիտենական է, մեր ապրումին մասերը և պահերը կրնան ամբողջանալ միայն. այդ կեանքով, Վատահ ենք թէ անսնք նոյնիսկ, որոնք չունին ստոյդ հաւատքը Յիսուսի մեռելներէն յարութեան, որոնց մտածումը շօշափելիէն անդին անսատակ է թե բանալու, կ'ունենան կարելի հաւատքը Յարութեան, երբ ամէն անզամ Զատիկի առաւօտը ծազի երկրի վրայ, և հաճոյքը՝ մտածելու թէ մէկը վերջապէս մեռնող միջիոններէն, բացած է զոցուող զերեզմանը, և ապրած՝ երկրի վրայ։

Զատիկը այս կերպով ծաղկած օրն է տարուան, որուն մէջ, կեանքի գեղեցկութիւնը և Աստուծոյ սէրը այնքան հրաշալիօրէն կ'ապացուցուին։ Ու վեր-

ջապէս թէ մահը վերջ մը չէ մեր օրերուն, այլ փորձառութիւն մը՝ դադրած այլս տխուր ըլլալէ, վիճակ մը միայն, ծնունդ տալու համար ուրիշ վիճակի մը:

Զատիկլը ոչ միայն անվախճան յաւիտենականութիւն մը կը բանայ մեր առջկ, այլ նաև կը լցուինք զօրութեամբը Յարութեան, հազնելով նոր նըկարագիր: Մեռելներէն յարութիւնը յայտնութիւնը չէ միայն մարդկային անմահութեան, մարդիկ անծանօթ չէին անոր, այլ ներկայ և ապազայ կեանքերու միութեան, և մարդուն վերանորոգման: Որով յարութիւն առնելը, Աւետարանի մտածումով կը նշանակէ ոչ միայն վերակենցաղիլ, այսինքն նորէն շարունակել մահով ընդհատուած դրյութիւն մը, այլ վերապրիլ աւելի հզօր և պայծառ, աւելի բարգաւաճ և արդինալից կեանք մը: Նման ատոք ցորենահատին, որ իշնալով հոգին մէջ՝ կը մերկանայ իր անհատական միութիւնն. ու կեանքը պահպանող պատեանէն, ծնունդ տալու համար քանակով և որակով յաւէտ բազմապատկելի ցորենահատին:

Յարութիւնը ուրեմն ոյժն է երազուած անմահութեան, անձնանորոգման, և Քրիստոսի նորոգիչ ներկայութեան:

Գաղափարապաշտութիւնը կ'ուսուցանէ անմահութիւնը անձնական կամ գերանձնական ողիին, գաղափարին և արժէքին. բայց ոչ անձին: Այս տեսութիւնը ճշմարտութեան բաժին մը ունի իր մէջ, ի վերջոյ ոսեղէն սկզբունքն է որ անմահ է մարդուն մէջ, սակայն այս ոգեղէն սկզբունքը չի հանդերձեր անձը յաւիտենականութեան համար, չի պայծառակերպեր իր ամբողջ ոյժերը: Անձը, որ ինքինքը իրազործած և հասած է ամբողջականութեան, անմահ է:

Նիւթապաշտութիւնը, զրապաշտութիւնը վարդապետութիւններ են, որոնք կը հաշտուին մահուան հետ, կ'օրինաւորեն զայն, իսկ յառաջիմութեան վարդապետութիւնը, ամբողջութեամբ զրաւուած ըլլալով տեսակի ապազայով և ապազայ սերունդներու ճակատակրով, ինքզինքը բոլորովին անտարբեր կը ցուցնէ անձին և անոր համար ըլլալիքին հանդէպ: Գալով նախաքրիստոնէական կեցուածքին, ան կը յայտնէ համակերպութիւն մը ճակատազրին, որ իր հետ կը բերէ անխուսափելիօրէն մահը: Անձնական անմահութեան գաղափարը օտար էր նոյնպէս հին հորայելի ժողովուրդին, կար միայն ժողովուրդի անմահութեան զիտակցութիւնը: Ցոքի գիրքին մէջ է որ կ'երեւայ առաջին անդին ըլլալիքին և իր եղերականութեան զիտակցութիւնը: Անձնական անմահութեան գաղափարը միայն ինքզինքը կը յայտնէ ճշմարտորէն յոյներուն մօտ, և հոն իր զարգացումը իրապէս հրահանգիչ է: Ի սկզբան, հասարակ մահկանացուները չեն որ անմահ են, այլ կիսաստուածները, հերոսները, մեծերը: Յունաստանի զիցարանական և կրօնական զիտակցութեանը մէջ աստուածային անմահութիւնը՝ յայտնուած էր զուգահեռաբար մարդկային անմահութեան:

Քրիստոնէութիւնը կ'ուսուցանէ յարութիւնը, յաղթանակը մահուան վրայ, ամբողջ ստեղծուած աշխարհին համար: Ան կ'ուսուցանէ մանաւանդ յարութիւնը որ պայցքարն է մահկանացու և ողեկան ոյժերու, մինչդեռ բնական անմահութիւնը ոչ մէկ կոր կ'ենթազրէ: Մարդկային անձին յաւիտենական կեանքը կարելի է, և դրյութիւն ունի ոչ թէ իր հոգիին բնական էութեանը պատճառաւ, այլ որովհետեւ Քրիստոս յարութիւն առած և յաղթած է աշխարհի մահաբեր ուժերուն:

Եւ սակայն Յիսուսի Յարութիւնը մահուան վրայ տարուած յաղթանակ մը ըլլալով հանդերձ, է նաև երկնայնացումը աշխարհին և աստուածացումը մարդուն։ Այս մեծ հասկացողութեամբ զերեզմանէն անդիի կեանքը զերմարդկային կեանք մը կը դառնայ, որուն փորձառութիւնը եթէ աստէն չենք կրնար ունենալ, բայց նախազգալը տրուած է մեզի։ Մարդուն ապազայ կատարեալ և լիալիր կեանքին վրայ այս վստահ մտածումը՝ զմեզ կը տոգորէ մեր ապազային պատրաստութեան խորհուրդով և իցիւ թէ տոգորէր մանաւանդ անոր հաստատուն կամքով։

Յիսուսի Յարութիւնը այլաբանութիւն մը չէ, այլ իրականութիւն մը, որ պատուած է այլևս մահուան վարագոյրը, և միացուցած իրարու ընդմիշտ կեանքը անմահութեան, և ժամանակաւորը անժամանակին։ Քրիստոսի ճշշմարիտ յարութիւնը իր Եկեղեցին է, անոր կազմաւորած քրիստոնէական կեանքը, և անկէ ծնած տիեզերական քաղաքակրթութիւնը։

Հայ ժողովուրդը դարերով հաւատացած է Քրիստոսի և անոր Յարութեանը։ Վասնզի առաջին այն պահէն ի վեր՝ երբ մեր տոհմային զզացումը փոխակերպուեցաւ ազգային զիտակցութեան, քրիստոնէութեան լոյսին ներքեւ, վիշտը զարկաւ միշտ մեզի։ բայց ամէն անդամուն ալ վէրքը, ուշ կամ կանուխ, սպիրացաւ վերջապէս։ Շատ բան կորսնցաւցինք, վայելք, հարստութիւն, ոյժ եւ ուրիշ առաւելութիւններ, որոնք անցան ստուելիներու նման արագ եւ անշշուկ, բայց հաւատարիմ մնացինք մեր ներքին արժեքին, մեր խաչին, վասնզի կը հաւատայինք անմահութեան ու այս բոլորէն վերջ ու վեր եղող այն զաղափարին և իրողութեան, որ Քրիստոսին է և իրմով իր Եկեղեցին տրուած։

Ո՞վ պիտի արզիէր զմեզ մեր ազգային կեանքի և բարյականի զիտակցութենէն նոյնիսկ հանելէ մեր Փրկչին Յարութեան այլապէս սրտապնդիչ եւ սիրակի ապացոյցը։ Իրեն համար միշտ առնջուած, և իրեն չարչարակից, մեր հոգին անառիկ իրաւունքը կը նկատենք իր յարութեան փառակից ըլլալու սուրբ յոյսը, վասնզի մեր մէջ ապօռ իր կեանքին ու մեր հաւատքը խանդավառող իր, սիրոյն մէջ զինքն է որ կը զգանք ու կը շօշափենք։ մեր վիշտերու կակծանքին մէջ իր վէրքն է որ կը համբուրենք, մեր վիտառութեան վայրկեաններուն՝ իր ձայն ու նայուածքն է որ կը խրախուսեն զմեզ, և երբ կ'երգենք իր յարութեան փառքը, կը հաւատանք թէ կենդանի և միշտ մեզի հեա և մեր մէջ անձնաւորեալ զօրութեան մըն է որ կ'ուղղենք մեր ամբողջ էութիւնը։

Մ'ենք իրք Ազգ և Եկեղեցի մնայուն յարութիւն մըն ենք։



ԿՐՈՆԱԿԱՆ

ՍՐԾԵ՝ ԽՕՍՔԵՐ

«Եւ արօախ վաղվաղակի եւ եւ զիւեր»

Սովորութենէ աւելի, իրաւունքի մը գգացումով, այս մութ պահուն, ձեր հոգիները կը պահանջին այս սուրբ, բնմէն անհրաժեշտ խօսքը: «Եւացի գիշերը զիմաւորուած է միշտ մեր ժողովորդէն արտակարդ զ զացումով, և ատիկա մեր կեանքի համեմատութեամբ իր հասկնալի նշանակութիւնը ունի: Այս գիշերը խօրհրդանիշ պատկերն է եղած զարերով մեր ցեղի կեանքին:»

Ամէնէն յուզիչ իրիկունն է, և եթէ փորձէք ձեր հոգիները մասեցնելու այն մեծ հոգին հետ, որ կը տրամի, կը տառապի, կ'արինի, տառով աւելի պիտի խտացնէք և աճնենէք գուք զձեզ, աւելի թափանցիկ կերպով կարենալ զգալու տագնապը որ այս գիշերուան է:

Ձեմ ուզեր ձեր գութը շարժել այն մեծ տրամային մէջ, ու ճակատազիրը եղաւ Աստուծոյ Որդիին, զան զի վստահ եմ թէ ձեզմէ իւրաքանչիւրը իր կեանքին մէջ ունեցած է պահեր՝ ուր առաւել կամ չուուզ չափերով նոյն ուաքները ոզկաւը են ձեր հոգին, Ձեզմէ ո՞վ չտառապեցաւ իր սիրելիին համար և իր սիրելիին, ո՞վ է զաւածանուած իր բարեկամէն ու չէ լքուած եղբայր մարդերէն Մեզմէ իւրաքանչիւրը բաժներ է կեանքին մէջ ճակատազիրը՝ որ Աստուծոյ Որդիին է այս գիշերուան մէջ. այլապէս այս գիշերը պիտի չունենար այն մեծ և խորունկ անդրադարձը մեր բոլորի հոգիներուն վրայ:

*

Տրամը կը բացուի ուրախութեան սեղանով և կը միջամտուի գաւուզ: Կը սկսի մեծ գիշերը: Մութ է ամէն կողմ, համատարած մութը Մինի բլուրէն մինչեւ Մուղաբու լեռները, Գեթսիսմանին, Զիթենեաց լեռը, Յովսափառու հեղեղատը մինչեւ Ծորդանանու հովիտը, ամէն ինչ ծածկուած է անթափանցելի խաւարին ծոցը: Կիթիսա-

րի ոզիներու պէս միայն կը բարձրանան տաճարին աշտարակները և պարիսպներուն անկիւնաբուրգերը:

Սակայն աւետարանիչը կ'ակնարկէ կարծես հոգեկան մթութեան մը, երբ մատնիչն մեկնումը յիշելէն անմիջապէս զիրջ կ'ըսէ. եր զիւեր: Յուղայի դժնէ նկարագիրը, զչարող սրտին մաղձը, իր վարդապետին սէրը վաճառող իր ընչափաղը հոգին՝ կը սահզծեն մարդուն քնացող խղճին զիւերը:

Զուարթ չէր նոյնպէս սիրտը ալակերտներուն: Ուտքերու լուացման օրինակը, որթատունկին առակը և ողկոյլին պատկերը՝ տպաւորած և քաղցրուցուցած էր իրենց հոգին, սակայն մեկնումի և վերադարձի այն խօսքերը գարնուած հովիւի և ցրուած հօտի ակնկալիւթիւնները լքումի և յուսահատութեան խոսքը մը յուղուած էր անոնց ներօք: Եւ գիշերուան մէջ, զիւեր մըն եւ նաեւ աննու սիրը:

Գիշեր մըն ալ կար Յիսուսի սրտին խորը: Իր կոչումին մատծումը, իր գրածին խորհուրդը, իր աշակերտին դաւը, շատ գիշերէն հասկցուելու վիշտը, կ'ընէն տրում այդ գիշեր իր անձին համար՝ սմինչեւ ի մահ»:

Աստուածային երկուեքի զիւեր:

*

Դուք բոլորդ որ զիս մտիկ կ'ընէք այս գիշերին մէջէն, ձեր մանկութեան օրերէն ձեր մտքին մէջ շինած էք պատկերը այս գիշերուան, զոր ճակատազիրը գժբախտ սուուզութեամբ մը շատ անգամներ փոեց ձեր աչքերուն գիմաց: Զկայ մէկը որ չը զիտնայ թէ Գողգոթան սկիզբ կ'անէն Կիթսեմանիէն, թէ մինչեւ բազկատարած ամբարձումը խաչին, մարդկային պատմութեան մէջ քիչ անգամ տեսնուած տրամը կը գալարուի մէկէ աւելի ժամերու երկայնքովը:

Ցուրտ ու մութ իրիկունով մը իջէք ինձի հետ Գեթսիսմանի, Զիթենեաց սաղարթախին անտառակը, ուր լուսինը ի զուր կը ջանայ նետելու իր լոյսը պարտէզը լեցնող զահանդական խաւարին վրայ: Եւ մերժումի այդ գիշերին մէջ, Յիսուս ծունկի ժայուի մը դիմաց կ'աղօթէ ու կը տրամի:

Թիսուս մարդկորեն կը սոսկայ ժահէն, վասն զի տակաւին մահը չէ նուանուած իր մահով։ Անիկա տէրն է կեանքին, և կեանք ամէնէն աւելի իր մէջ գեղեցիկ է ու կատարեալ, և բնական է որ մահուան պայքարը ամէնէն աւելի իր մէջը ըլլայ բուռն ու վերջնական, անոր համար կ'ըսէ։ ոհայր, ապրեց զիս ի ժամէ յայսմանէ ու ապա, ույլ վասն այնորիկ եկի ի ժամս յայս։

Մարդկայինն ու աստուածայինը՝ ճակատ ճակատի են իր մէջ, լոյսը և կարմիր տիղմը մարդուն։ Բայց յաղթանակը հոգիին է։ մարմինը, հոգիին վրայ ծանրացած այդ կաւը պիտի թքանի և արինի, և կայլակ կայլակ պիտի թափի իր ծունկերուն։ Բայց պահը այն պահերէն է ուր մարդկայինը պէտք է պարտուի և աստուածայինը յաղթանակէ։

Աւետարանը երկինքը կը բանայ Յիսուսի վրայ և կրեղէն էսկ մը բաժակ մը կը մատուցանէ իր շրթներուն։ թէ ի՞նչ կար բաժակին մէջ՝ մը հարցնէք, միայն զիտենք որ այդ պատկերը փայլակի մը պէս շինուեցաւ և աւրուեցաւ, հերեղէն էսկը բացաւ իր ճամբան դէպի անհուն, Յիսուսի նայուածքը այդ կրակէ ակօսին մէջէն սուզուեցաւ մինչեւ երկինքներուն խորը և հոն կարզաց իր պարտականութեան վճիռը արինուզ գրուած, որուն ամէն մարդ պէտք ունի իր կեանքի մէկ օրին։ Ան իր հայրը կը հագնէր այդ բոպէին և կ'աստուածանար։

Երկինքները կը գոցուին, քայլերը կ'ամրանան, կը մօտենայ իրեններուն որ կը քնանան։

* *

Երեք մարդեր կանչուած էին վկաներ ըլլալու այդ մեծ ժամուն, հսկումի այդ վայրկեաններուն, ցաւակից ըլլալու իրենց վարդապէտին և հսկելու, անակնկալի չը գալու համար։ Պահը մեծ էր և ճակատագրական, վասն զի անոր կապուած էր ոչ միայն Տիրոջ՝ այլ նաև աշխարհի դողչը զացող ճակատագրիր։ Անշուշտ աշակերտները չէին կրնար զգացակից ըլլալ իրենց Տիրոջ, սակայն տիսուր սոտուգութեամբ Յիսուս մինակ մնաց իր ատակապին հետ։

Գիտէ՞ք ինչ մեծ մխիթարութիւն է մեր ցաւին հաղորդ մարդկային դէմք մը։ Այդ համակրանքը մեր կեանքի մութ ժամերուն՝ ամբողջ աշխարհ մը կ'արժէ, և ոյդ մը համբերութեամբ կրելու մեր տառապանքը։

Թիէ, շատ քիչ բան կընանք ընել մենք իրարու այս աշխարհի մէջ, երբ վասանգը կը մօտենայ, սակայն գիտնալ թէ կայ մէջ կը որուն սրտին զարկերը կը տրոփեն մերինին հետ, այդ զգացումին մէջ կայ ամոքի բան մը, որ վասանգը կը թթվեցնէ և տառապանքը կը քաղցրացնէ։ Այս ըզգացումով Յիսուս իր քով պահեց իր աշակերտները։

Աղթօնն կենալու հրահանգը երկու անգամ տրուեցաւ իրենց, խսկ երրորդ անգամ երբ զիրենք քնացած դտաւ, ոչ մէկ խօսք իր շրթներէն։ Այլեւս քուն և հրակում համարժէք կը մնային, թանկազին պատեհութիւնը կորուած էր յաւիտենապէս և անցեալը կը մնար անդառնալի, անվերագնելի, ոչ մէկ երկրային ոյդ պիտի կնարա ետ դարձնել այն ինչ որ կորսուած էր։

Մութէ արդէն կը նիդակուէր մօտեցող լայսերով, և գիշերը կ'արթնենար ոտնաձայներով, չարին ժամն էր և Յուրգան՝ չարին իշխանը, գարերու մեղքն ու արիւնը շալկած, պարտէզ կը մտնէր առաքեալի պատմուանով։

Աշակերտաները ի զուր կը ջանան վանել մօտեռով թանձրացած քունը իրենց աշերէն և սարսափը իրենց նոզիներէն։ Ժամ մը չէին կրցած հսկել իրենց վարդապէտին համար։ Յաւերժութիւններ արժող վայրկեանները ի զուր անցեր էին, վասն զի անոնք յաւիտեաններու գուռներուն զիմաց կեցած՝ քնացեր էին, և քունը պատգամաւորն է մահուած, ինչպէս կ'ըսեն, մանաւանդ բարոյական իմաստով։ Մնացեալը չի պատմուիր։

Գեթսեմանին Տիրոջ հոգեկան պայքարի և մեծ յաղթանակի սալմավայրն է, անկէ վերջ պայքար չկայ։ Յիսուս խաղաղ է թէ քահանաներու տաեաններու մէջ և թէ Պիղատոսի առջեւ, ապրելով խաղաղ վայրելը Գեթսեմանիի յաղթանակին։ Առաքեաններն ընդհակառակին, անպատճառ սակայն տիսուր սոտուգութեամբ Յիսուս մինակ մնաց իր ատակապին փորձութեան դիւն։

ժագրաւել: Անոնք այդ գիշեր չէին հազած աղօթքին զբաց, չէին կնքած իրենց հոռ գիշին կարմիր ուխտը: Նման էին հերազուրկ Ասմոնին, թշնամինին թշնամուրկ մեռքին մէջ:

*

Ամբոխը՝ որ ատեանէ ատեան և զատարանէ դատարան հետեւած էր թիսուսին, տկրը հոգիներու յատուկ մխուր մտայնութեամբ, որ յաջողութեան և զօրութեան մէջ կ'ուղէ միայն տեսնել արդարութիւնը, նուազեցուցած էր իր համակրանքը:

Նոյնիսկ անոնք որ քանի մը օրեր առաջ թիթփաքէի թլուրին վրայ խանդավառ ոգեւորութեամբ ծափողջուներ էին զինք իրբեւ Դաւթի գահուն վերանորոգիւը և խրայէլի դարաւոր յոյսերուն յարմացումը, անտարբերութեան մշուշի մէջին կը նայէին այլևս իրեն: Խօս իրենները, որոնք քանի մը ժամեր առաջ ուխտեր էին մեռնիլ իր հետ, վտանգի ժամուն, չէին կրցեր հանդուրժել փողձութեան, և վերջին բոպակէն առաջ լքեր էին արգէն զինքը: Անշակերտ մը և քանի մը տկար կիներ, որոնց մէջ Տիրոջ սէրը աւելի ամուր էր նստած՝ հեռուէն կը հետեւէին իրեն, նման գողգոջ քայց անմար լոյսերու, ճամբաներուն եղերքը հաստատուած լապտերներուն՝ զորս ջախնչախած է փոթորկի ուժգին հարուած մը:

Ասպարէցէն քաշուած էին բոլոր բարի ազգեցութիւնները. Կ'իշխէին միայն հեռն ու նենդութիւնները, չարութիւնը և ոնք բագրոր մտածումներէ իրենց սնունդը քաշող սեւ կիրքեր: Պիզատոս՝ Աստուծոյ քազաքին մէջ Հոռովմի ոյժին ներկայացուցիչը, որ, ի վերջոյ, սկեպտիկ քմծիծաղի մը մէջ խեղդեր էր ճշմարտութեան ձայնը: Հերովդէս՝ Մարգկային կերպանքին ներքեւ աղուէսի հոգի ապրող արեւելեան բռնկալի ախպար մը, Աննան և Կայիրափա, որոնք քահանայապետական աստիճանի հին սրբութիւններուն շատոնց խառնած էին քաղաքական նկատումներ, իրենց զոհմակով, զորս աւելի կը մոլեգնէր արեան հոտը, գիշերախառն ջահակնացութիւններով պիտի քաշկոտէին թիսուսը ատեանէ ատեան, տառապանքէ տառապանք:

Բայց հոս կանգ չ'առներ մեր մտածումը, անիկա կը հետեւի լաքող գիշերուան

մէջ թիսուսին, որ հնազանդ գերազոյն կամքին և սիրոյ պարտականութեան, կը քալէ խաչի արիւնոտ ճամբայէն:

Կապուած են իր ձեռքերը, և խաժամուժ ամբոխը կաղկացած զինուորներէն, սինլորներէն և տաճարի հացկատակներէն, հեղեղի մը պէս առած զինքը իր ծոցը կը քչէ: Երբեմն լամբարի կարմիր լոյսին մէջ, թիսուսի մաշած գէմքը մարմրող արեւի մը պէս կը տժգունի:

Անոր տակաւին պիտի հագցնեն, ճերմակ զգեստը, իր գլխուն պիտի զնեն փէտ պասկը, և իր ուսերուն պիտի զետեղեն խաչը, և ուրացողներու թափօրը զինք պիտի առաջնորդէ Գողգոթան, և հոն սըրազան քաղաքի արիւնոտած աչքերուն զիմաց, երկու աւազակներու միջնեւ պիտի խաչեն հազարաւոր աշակերտներու վարդագետը:

Մարգկային բառեր ի զօրու չեն խըտացնելու Գողգոթայի պատկերը նոյնիսկ մեր մտածումնին մէջ. Երկնքի և երկրի միջեւ առկախ, երկնի և երկրի արարիչը պիտի թափէ կաթիլ առ կաթիլ իր աստուածային արիւնը մահուան գործիքի կողերն ի վար, պիտի մաշի բոցի մը պէս, գալիք արշալոյսին համար:

Ասկէ անդին գժուար է հետեւիլ, վասն զի ասկէ անդին մարդը կը գաղրի և Աստուածը կ'սկսի:

*

Տեսարանէ մը աւելի խորհուրդ մըն էր սակայն որ կը պարզուէր հոն այդ բարձունքին վրայ. Ան կը զոհէր ինքինքը ուրիշներու փրկութեան համար. Աստուածային զօրութիւննը ոչ մէկ ատեն այնքան սրտազրաւ գեղեցկութեամբ կը վսիմանայ՝ որքան երբ ի յայտ կուգայ կեանքի ճռնչուած ու տիեզե իրականութեան մը մէջ: Ով որ ուրիշներու փրկութեան կը լէէ ինքինք, պարտի կորանցնել ինքինքը. «զայլս ապրեցոյց», առանց խորհելու ինքինքին: Մենք այն ատեն միայն կը ընանք իրապէս փրկել ուրիշները, երբ կը յօժարինք մեր կորուստին: Այս պիտի ըւլար ակբանքն ու զաղանիքը քրիստոնէական մարտիրոսութեան, որ արեամբ ոռոգւածի անծայրածիր գաշտերու մէջ ծագկե-

ցուց ամբողջ մարդկային կեանքն ու բարոյականը յեղաշընդ տիեզերական յառաջդիմութիւն մը:

Մեծ ոճիրին եղերական վայրկեանները արագօրէն յաջորդեր էին իրարու, և այս ապերախտութեան լեռներուն գէմ ձայնը հարիւրապետին, «արդարիւ այս այս արդար էր» ճրագի մը պէս կը լուսաւորէր իւաչին մռայլը:

*

Կեանքի հիմնական զարկը տառապանքէ եթէ մենք կը վախնանք անկէ, անիկա զինն է պատրանքի մը: Վասն զի էն երշանիկ մարդու նայուածքը գերեզմանի մը վրայ ի վերջոյ կը բացուի: Ինչպէս տառապանքը վայելին, գեղեցկուրեան և ոյժի փոխել, այս է հրաշքը այս գիշեր խաչին գացող Ասսուծոյ: Վասն զի կարելի չէ երեւակայել աշխարհէ Մը առանց խաչի, այսինքն առանց ճիգի, առանց յառաջդիմութեան: Խաչէ զերծ կեանքերը մահուան կը նային:

Տառապանքը ըմբռնելու սխալ կերպ մը կայ, զգացական ու արտաքին, որ մեզի կուգայ մեր անցեալէն, մեր ապագայէն, մեր առօրեայէն, և իր սուր, ծանր, մութ և փշրող թաթին ներքեւ կ'անդամալուծէ զմեզ, և անկէ ահարեկի խուսափանքը ծնուռնդէ տուեր իմաստասիրական և բարոյական գրութիւններու: Պուտայականութիւնն, ստոյիկեաններ, Նիշչէն և Ծօրէնհառւէս պիտի տառապէին այս մութին գէմ, առանց կարենալու դրական իմաստ մը տաւլու տառապանքին: Քրիստոնէութիւնը միայն պիտի կրնար ճանչնալ իմաստն ու արժէքը խաչին, տառապանքին: «Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա թէ մեռանիցի, բազում արդիւնս առնէց: Ամէն աճում ըլլայ անիկա իր նիւթական ըլլայ իր հոգեկան դրժարանաւորութեան մէջ, տառապագին վիճակ մըն է, կը տառապինք, կը զոհաբերուինք, որպէսզի ապահովուի աւելի վեր մակարդակի մը վրայ առաջադրուած իրադրծութը: Ու որքան աւելի բարձր յառաջդրուած իսէւլը, այնքան աւելի ծանր և տաժանագին է յանուն անոր դիմաւորեմիք տառապանքը: Տառապանքը

գիտունին, արուեստագէտին, Աստուծոյ, որոնք կեանքը գիմագրաւելու իրենց կերպը ունին, գէպի աւելի վերինը անդրազանցելով զայն: Իւրաքանչիւր մակարդակի վրայ տառապանքը կարելի կ'ըլլայ տանիւլ երբ կը սիրենն իրմէ վերինը վրայ իրադրուելիք արժէքը, բարիքը: Քրիստոնութեան քարոզած սէրը ազիւրըն է բոլոր առաքինութիւններուն, բոլոր արիւութիւններուն, և կարող կ'ընէ զմեզ տանելու Քրիստոսի հետ անոնց բոլորին խաչը:

Տարբերութիւնը, որով կը զանազանուուի կին քաղաքակրթութիւնը քրիստոնէութեան բերածէն, կը կայանայ Պողոսթայի խորհուրդին հագած նոր նշանակութեանը մէջ: Յիսուսով տառապանքը եղաւ կեդրոնական ազդակը ներքին բարձրացման և փրկութեան, նախերգանքը Յարութեան փառքին:

Տառապանքին փաստը խօսուն զօրութիւնը եղաւ մեզի, և կը մայ իրը մեր արժանիքին ամէնէն վաւերական ստուգանիւը: Մտաւորապէս զգասա և բարոյապէս զօրեզ են այն ժողովուրդները, որոնք շատ տառապած են արդարութեան, բարիին ու ճշմարտութեանը համար: Այս տեսակէտով պէտք է խօսուվանինք թէ հայը կը զանազանուի ուրիշ ժողովուրդներէն ոչ միայն իր ինքնութեամբ, այլ նաև զայն տեականացնելու կամքովը, խորհուրդով: Մեր հայրերը չեն մեռած պարզապէս մեռած ըլլալու համար, այլ վասնզի անոնք իրենց Պողոսթաներու բարձունքէն կը հաւատային թէ օր մը պիտի ողջունեն յարութեան փառքը ցեղին:

Այսօր երբ խաչի խորհուրդին և կեանքի իմաստին քողը անգամ մը ես վեր կ'առների մեր աշխերուն զիմաց՝ Պողոսթայի արիւութը տեսարանին մէջ, հեռուն՝ մեզի բոլորիս ծանօթ երկրի մը մէջ, մեր ժողովուրդը այլևս իջած իր խաչին, զմեզ բոլորս կ'ողջունէ իր յարութեան փառքով և փառքին մէջէն:

Ե.

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

(ՅԱԿԻԵՆԱԿԱՆ ԿԵՍԱՔԸ ՔՐԻՍՏՈՆԿ ՄԽԱՅԼ
ԽՐԱՊՈՐԵՏԵԼԻ)

«Ձի՞ խնդրեք զիենցամին թեղ մեռեալ»
ՆՈՒԿ. Խ. 6

Անհերքիլի և անուբանալի իրողութիւն
մըն է մահը ամէն մարգային էակի հաւա-
մար. Անիկա ամենասոյզ ապագան է
կեանքին. ու կու գայ իր ստոած ձեռքը
գնենու մեր սրտին վրայ, երբ կը հնչէ ճա-
կատագրական պահը մեզի համար. Այսեւ
պիտի չպատկանինք այս աշխարհի, և ոչ
ինչ մենք մեզի, այլ միմիայն անոր —
անհուան:

Բայց մէնք իրողութիւններն անտեսե-
լու մեր անհոգութեամբը՝ կ'ապրինք այնո-
պէս որպէս թէ կ'անգիտանանք մեր կեան-
քին պարագրուած այդ անխօսափելի
գափինանը: Ու հոս, անհրաժեշտ է որ մե-
զի նշանաբան ընենք ու խոտափիր համրու-
թեամբ ապրող լուսկեացներու սա յատկա-
նչական խօսքը — թէշէ մահուանդ ժամը,
յիշէ որ պիտի մեռնեա:

Ուրեմն պիտի մեռնինք: Սակայն աշ-
տով կը զիենցանայ ամէն բան: — Անշուշտ
ոչ: Մեր այս կեանքն իսկ մեզի կը ներդ-
ընչէ անմահութեան և հանգերձեալ կեան-
քի խտէալը ու կը խանցագառէ մեզ: կ'ապր-
ինք ոչ թէ ներկային այլ ապագային հաւա-
մար: Մերմացաննը կը սերմանէ՝ հունձքին
ակնկալութեամբ. ճարտարապետը քարեր
իրարու վրայ կը կուտէ՝ չէնքին հեռանը-
կարով մտագրաւուած, ու զաստիարակը կը
կրթէ մանուկը՝ ապագայ մարզը տեսնելով
անոր մէջ: Մենք ոչ թէ կ'ապրինք, այլ
միշտ ապրիլ կը յուսանք, ըստ է Բասո-
գալ: Արդարեւ ապրիլը յուսալ մըն է. ու
մենք այդ յոյսը ոչ միայն այս կեանքին
մէջ կը կրենք մեր էութեան խորը, այլ
նաև զայն կը փոխագրենք հանգերձեալին:

Երկրագունափ թոլոր կէտերուն վրայ ու
պատմութեան բոլոր գարաշըններուն,
մարգային հոգին ունեցած է յաւիտենա-
կանութեան այդ երազը: Այս ձգտումը ե-
թէ ոմանց մօտ անորոց փափաք մըն է
վերապրելու, ուրիշներու համար՝ անխօր-
ակելի համոզումի մը կնիքը կը կրէ ար-

դէն: Յիրաւի, մարդ չի կրնար ընդունիլ
թէ քանի մը զայրկեանի համար միայն
պիտի երեւի կեանքի այս թատերաքեմին
վրայ, այնուհետեւ ի սպառ կորսուելու և
անհանալու համար, անհունին գիրկը:

Եւ սակայն մահը ստուգութիւն մըն է
մեր կեանքին մէջ, և մէնք ամէն որ քայլ
մը աւելի կը մօտենանք անոր, որ կուգայ
զիենցանապէս մեզ ընկզմելու իր մթու-
թեան անգունդին խորը:

Ո՞վ պիտի երաշխաւորէ յաւիտենապէս
ապրելու մեր այս տենչը և զայն իրագոր-
ծէ մեր զիտացցական և հոգեկան գոյու-
թեան մէջ: — Քրիստոնէութիւնը կ'ըսէ,
Քրիստոյ յատեա:

Արեւելիքի պայծառ առաւտուներէն մին
էր երբ այս աւեսիսը առաջին անգամ
տրուեցած մարգակովթեան:

Իրենց բորոջ սոսկալի մահէն յետոյ
անհերեւութեացեր էին Յիսուսի աշակերտ-
ները: Մենք կը յուսայինք թէ, կ'ըսէին,
նա է որ պիտի փրկէր իրայէլը:

Սակայն, յանկարծ, զարմանահրաշ
լուր մը կը տարածուէր բարեկամներու ըըր-
ջանակին մէջ, թէ Տերը կենդանի էր:
Մագգաղենացին զայն տեսած էր, նա ե-
րեւցած էր Պետրոսի, և ողջունած էր
տասնըմէկը զիենցատան մէջ: Յաղթահար-
ուած էր մահը:

Քրիստոս յարեա՛ւ: Եւ խաչեալը իրեն
վկայ ունի իր առաքեալները և եկեղեցւոյ
բոլոր մարտիրոսները, որոնց կրած չար-
չարանցներուն ի տես թերեւս պիտի ըն-
կըրկէր մահուան պատկերին առջեւ մոլե-
խինդ խմող Սոկրատ մը:

* * *

Պարապ գերեզմանի մը շուրջ չէ որ կը
համախմբուինք Զատկի առաւտուն, այլ
ներշնչուելու այն կեանքով որ ծաւալեցաւ
անկէ և լեցու ամբողջ տիեզերքը:

Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս:
Գէտք չէ ողջը մեռելներուն մէջ հնտուել:
Յիսուս արդարեւ կենդանի է ոչ թէ որով-
հետեւ յարութիւն առած է, այլ յարութիւն
կ'առնէ որովհետեւ յաւիտենապէս կենդա-
նի է:

Ան իր մէջ անմահութիւնը կը կրէր
գերեզման դրուելէ առաջ: Զի բաւականա-

նար միայն նկարագրելով յաւիտենական կենաքը, այլ զայն կ'իրագործէ այս երկրի վրայ իսկ:

Քրիստոս անմահութիւնը կը կրէր իր խօսքերուն, իր գործքերուն, իր չարշաբանքներուն և նոյնիսկ իր մահուան մէջ:

Փրկիչը մեր տէրն է ու պաշտպանը, մենք կը գողանք մահուան առջեւ: Հաւատալ թէ Անդկա յարութիւն առաւ թափուր ճեղքելով գերեցմանը և երեցաւ իրեններուն, երաշխաւորութիւն մը չէ մեր հոգեկան փրկութեան համար, եթէ երբեք մեր կեանքով չնմանինք Քրիստոսի, եւ անմահութիւնը չապըինք մեր այս կեանքին մէջ իսկ:

Յաւիտենական կեանք. այս բացատրութիւնը իմաստասիրական տարած մը չէ մեր մարգկային կարելիութիւններէն գերազանցօքէն զեր մնալու դատապարտուած: Անդկա այս աշխարհի վրայ իսկ ապրուած բարոյական և հոգեկան վիճակ մըն է զարմեր հետ պիտի փոխադրենք մեր անզրչիրմեան կեանքին մէջ:

Այս օրինակը մեզի կու տայ նոյնինքն Յիսուս Քրիստոս՝ իր կեանքով: Անոր համար ներկայի և յաւիտենական կեանքի այս երկուութիւնը զոյութիւն չունի: Թիսուս չ'ըսեր թէ նա պիտի զլլամ, այլ նև նմ Յարութիւն և կեանքք. ով որ ինձի կը հաւատայ պիտի ապրի, եթէ նոյնիսկ մնանի. և ով որ կ'ապրի և կը հաւատայ ինձի՝ պիտի չմնանի (Յովի. Փե. 15):

Քրիստոս մեկնակէտն է այն երկու ուղիներուն որոնք մեզ պիտի տանին գէպի կեանք կամ դէպի մահ: Քրիստոսի հետ մեր բարեկամութիւնը մեր միակ երաշխաւորութիւնն է մտնելու համար անմահութեան համբուն մէջ. մինչ ժիստական կեցուածք մը մեզ պիտի տանի մահուան և յաւիտենական դատապարտութեան: Ահա

էականը մեզի համար, մենք որ վազուան մեռենիները պիտի ըլլանք:

Արդ, յարութիւն պիտի առնենք մենք եւս: — Այս: Բայց կենդանի՞ հենք: Եթէ կ'ուզենք ապրիլ, պէտք է գիտանլ թէ ինչ բանը կը սպանէ: Մահէն առաջ մարդը մահացնողը մեղքն է: Ով որ իր անձը միւայն ունի իրեն խտալ և անոր շորջ կը գտնան իր բոլոր գործերը, արդէն իսկ չարիքն ու մեղքը կը կրէ մէջ: Ու եթէ եսասիրութեան հետ մարմնաւոր հաճոյքներն եւս մտած են ներս մեր հութենէն՝ արդէն իսկ դատապարտուած ենք մեռնելու:

Բայց կայ նաեւ միւս ուզին ուր Աստուած կը սպասէ իր ողորմութեամբ, մեզի տալու համար մեր հոգիներուն փրկութիւնը՝ անմահութեան խոստումով: Եթէ իր Միհածին Որդին մեր մարմինն ու արիւնը առաւ պարզապէս պատուար կանգնելու համար էր մահուան ու կեանքին միջեւ:

Քրիստոսի յարութիւնը մեզի անհաւատալի պիտի թուի եթէ մեր ներքին կեանքին մէջ յարութիւն առած չենք: Ու յարութիւն առնելու համար նախ պէտք է մեռնի, մեռնի անձնասիրութեան, եսասիրութեան, զերջապէս մեղքին համար: Զայ Զատիկ առանց Աւագ Ուրբաթի: (Հուն. Զ. 5):

Մարգոց մէջ փոխանակ ատելութեան եթէ ներողամտութիւնը թագաւորէ, եսասիրութեան տեղ՝ ուերը, մեղքին տեղ՝ ուըրբութիւնը, հպարտութեան տեղ՝ խոնարհութիւնը, այն տաեն յաղթահարած կ'ըլլանք մահը այս աշխարհին վրայ նոյնիսկ:

Ով որ այս հասկացողութեամբ և քըրիստոնէական լրջութեամբ կը նայի այս կեանքին պիտի յաղթէ մահուան և ապրի յաւիտեան:

ՊՍԱԿ ՎՐԴ. ԹՈՒՄԱՅԵԱՆ
Աղեքանդրիա

ԿՐՈՆԱ-ԻՄԱՍՏԱԾՈՒՐԱԿԱՆ

ԽՈՐԻՄԱԱՏ ԿԵԱՆՔԸ

Հարկէ է որ իւրաքանչիւր մարդ գտնէ, իրեն համար, բարձրագոյն կեանքի մասնաւոր կարելիութիւն մը, խոնարհ և անվրիպելի առօրեայ իւրականութեան մէջ: Անզէ աւելի ազնիւ նպատակ չի կայ մեր կեանքին համար: Մեզ իրարմէ զատորոշողը անհունին հետ մեր ունեցած յարաբերութիւններն են: Հերոսն աւելի մեծ է քան իր քովէն ընթացող թշուառականը, միայն անոր համար որ, իր կեանքին որոշ մէկ վայրկեանին, ունեցեր է աւելի խոր զիաւակութիւնն այս յարաբերութիւններէն մէկուն: Եթէ ճշմարիտ է որ ստեղծագործութիւնը մարդով չի սահմանափակուիր, և որ բարձրագոյն և անտեսանելի է ակներ մեզ կը ըրջապետեն, այս էակները մեզմէ բարձր են այս միակ պատճառաւ, որ անհունին հետ ունին յարաբերութիւններ, որոնց մասին չենք կասկածիր իսկ:

Մեզ համար կարելի է բազմապատկել այս յարաբերութիւնները: Իւրաքանչիւր մարդու կեանքին մէջ եղած է օր մը: Ուր երկինքն ինքնարերաբար բացուած է, և գրեթէ միշտ այդ վայրկեանէն կը սկսի էակի մը ոգեկան անձնաւորութիւնը: Այդ վայրկեանին կը կազմուի, անկասկած, անտեսանելի և յաւիտենական դիմագծութիւնը զրոյ կը ցուցագրենք հրեշտակներուն և հոգիներուն: Բայց մարգոց մեծ մասին՝ երկինք կը բացուի այդպէս՝ միայն դիպուածով: Անոնք ընտրած չեն այն դիմագծութիւնը որով կը ճանչուինք հրեշտակներէն անհունին մէջ, և որուն զիմերն ազնուացնել, զտել չեն զիտեր: Անոնք ծնած են ուրախութեանէ մը, արտմութեանէ մը, վրիպանքէ մը կամ պատահական խորհուրդէ մը:

Ճշմարտապէս կը ծնինք այն օրը, երբ առաջին անգամն ըլլալով խորապէս, կը զգանք անակնալ և լուրջ բանի մը դոյսւթիւնը կեանքին մէջ: Ամանք կը հաստա-

տեն յանկարծ որ առանձին չեն երկինքին տակ: Ուրիշներ՝ համրոյրով կամ արցունքով մը՝ կը նշմարին որ «տիեզերքէն մինչ Աստուած, լաւագոյնին և սրբութեան ազբիւրը թագնուած է գիշերի մը ետին՝ լի հեռաւոր աստղերով»: Երրորդ մը տեսած է աստուածային ձեռքի մը կարկառիլ իր ուրախութեան և արտմութեան մէջ: Ա չորրորդ մը հասկած է տրամարանական իմաստը մահաւան: Ուրիշ մը գութ ունեցած է, ուրիշ մը՝ ահ, ուրիշ մը հիացած է: «Նախապէս կը սիրէ քեզ եղածոր մը պէս, կ'ըսէ Շէյքսպիրի հերոսներէն մին՝ իր հիացման արժանացած արարքի մը առջեւ: Նախապէս կը սիրէ քեզ եղածոր մը պէս, այժմ կը յարգեմ քեզ հոգիին պէսու: Հաւանական է որ այն օրը էակ մը ծնաւ:

Այդպէս կրնանք ծնիլ մէկէ աւելի անգամներ, և իւրաքանչիւր ծնուղին՝ կը մօտենանք քիչ մը մեր Աստուածոյն: Բայց գրեթէ բոլորս կը գոհանանք սպասելով որ անդիմագրելի լոյսով զեղուն եղելութիւն մը ուժգնորէն թափանցէ մեր խաւար իսկութեանը և լուսաւոր զմեզ հակառակ մեր կամքին: Կը սպասենք չեմ զիտեր ի՞նչ բախտաւոր զուգագիպութեան մը, երբ մեր հոգիին աչքերը բացուած կ'ըլլալան պատահմամբ արտակարգ դիպուածի մը պահուն: Բայց լոյս կայ ամէն գէպքի մէջ: և մարդոց մեծագոյնները մեծ եղած են միայն անոր համար որ սովորութիւն ունէին իրենց աչքերը բանալու բոլոր լոյսերուն: Անհրաժեշտ է ուրեմն որ ձեր մայրը հոգեվարի ձեր բազուկներուն մէջ, կամ ձեր զաւակներն անհետին նաւարեկութեամբ և կամ գո՛ւք իսկ անցնիք մահուան մօտէն, որպէսզի հասկնաք վերջապէս թէ կը գտնուիք անըմբանելի աշխարհի մը մէջ ուր տեսապէս գոյութիւն ունիք, և ուր անտեսանելի Աստուած մը յաւիտենապէս կը բնակի առանձին իր արարածներով.... Եթէ աչքերնիդ բացած ըլլայիք, պիտի չկրնայիք անեսնել համբոյրի մը մէջ, այն բանը զոր կը նշմարէք այսօր աշէտիր մը մէջ: Պէտք է որ տառապանքը այսպէս արթնցնէ նիզակային հարուածներով մեր հոգիներուն մէջ ննջող երկնային յիշատակները: Իմաստունքն պէտք չունի նման ցնցումներոււ: Ան կը նշմարէ արցունք մը, ժէսթ մը, կաթիլ մը ջուր որ

կ'ինայ, կ'ունկնդրէ անցնող մտածում մը, կը սեղմէ եղքօր մը ձեռքը բաց աչքերով և հոգիով։ Ան կրնայ միշտ տեսնել անոնց մէջ բաներ՝ զոր գուք գիտած էք միայն պահ մը, և ժայիտ մը պիտի սորփեցնէ իրեն առանց գժուարութեան այնբանը՝ զոր ձեզի յայտնելու համար փոփորկի մը և մահուան ձեռքին իսկ պէտք են։

Վասնզի, ի՞նչ է, խորքին մէջ, սա ամէնը որ կը կոչեն և Խմաստութիւն», «Ասուաքինութիւն», «Հերոսութիւն» և Ազսմ ժամեր և մեծ վայրկեաններ» կեանքին, եթէ ոչ միայն այն վայրկեանները, որ առաւել կամ նուազ չափով ինք իրմէն դուրս կուգայ մարդը, կանգ կ'անէ, բոլոք մը գէթ, շեմին վրայ յաւիտենական գոներէն մէկուն ուրկէ կը տեսնէ որ փոքրազոյն ձիչը, գալզէագոյն խորհուրդն և տկարագոյն շարժումը չեն իյնար անենթեան մէջ, կամ եթէ իյնան իսկ, անկումն այնքան է մեծ, որ կը բաւէ տալու վեհ նկարագիր մը մեր կեանքին։ Ինչ ո՞ւ կը սպաէք երկնակամարի որոշումները երջանի բացուի լուսաթիւն մէջ։ ԶԱստուած կը գիտուէք ձեր կեանքին մէջ, և Ան չերկեր, կ'ըսէք դուք մեղի ։ ։ ։ ։ Վայց Աստուած, ահաւասիկ Աստուածը . . .։

Երբ Աստուած կ'անցնի, չե՞նք կրնար ծունկի գալ Անոր առջև առանց այլոց ազգարարութեան։ Եթէ սիրած էք խորապէսն, ո՞չ ոք նկատել տուած ըլլալու է ձեզի թէ ձեր հոգին մեծ է աշխարհներու չափ, թէ աստերը, ծաղկները, գիշերուան և ծովուն տարտամութիւնները մենաւոր չէին, թէ ո՞չ մէկ բան վերջ ունէր, և թէ ամէն ինչ սկիզբ կ'առնէր երեսոյթներու սեմին։ Կարիկ՞ չէ ապրիլ որպէս տեսական սիրահար, Հերոսներն ու սուրբերն ուրիշ բան չեն ըրած, Այո՛, իրապէս, քիչ մը շատ կը սպասնք կեանքին մէջ նման աւանդութեան կոյրերուն որոնք երկար ճամրորդած էին գալ լսելու իրենց Աստուածը։ Աստիճաններուն վրայ նստած էին անոնք, երբ մէկը հարցնէր իրենց թէ ի՞նչ կ'ընէին սըրապայրին դաւթին մէջ։ Ակը սպասնքի, կը պատասխանէին անոնք, գլուխ շարժելով, և Աստուած ցաւագիրն առանց բան մը չէին առանց բան։

Որ տաճարին պղնձեայ դռները գոցուած էին, և չէին գիտեր որ իրենց Աստուածոյն ձայնը կը լեցնէր չէնքն ամբողջ։ Մեր Աստուածը վայրկեան մը իսկ չի զագրիր խօսել։ Բայց ո՞չ ոք կը խորհի բանալ դըռները, եւ սակայն, եթէ մարդիկ ուշադիր ըլլային, գժուար պիտի չըլլար լսել Աստուածոյ խօսքը ամէն արարքի առիթով։

Բոլորս գիտմի մէջ կ'ապրինք։ Ո՞ւր կ'ուզէք ուրեմն որ ապրինք. կեանքի այլ վայր, չի կայ։ Մեղի պակսողը, երկինքի մէջ ապրելու առիթները չեն, այլ՝ մտամ-փոփումն ու ինքնամփոփումը, և քիչ մըն ալ հոգեկան գլուխութիւն։ Երբ փոքր է ձեր սենենակը կը խորհի՞ք որ Աստուած զայն չ'այցելեր, և թէ անկարելի է հոնքին մը բարձր կեանք վարել։ Եթէ զըժ-գոն էք առանձնութիւնէ, թէ բան չի պատահիր ձեզի, թէ ո՞չ ոք կը միրէք, ոչ ոք սիրուիք, չէ՞ք խորհիր սակայն որ բառերը կը խարեն զձեզ . . .։ Կենդանի խորհուումը մը, բարձր իշճ մը կամ պարզապէս հանդիսաւոր մտամփոփման պահ մը կեանքին չե՞ն կրնար արդեօք մտնել պատիկ սենեակ մը։ Տեսէ՞ք, հազար գեղեցկութիւններ կան, նոգին մեծ է, կեանքը անձառելի խորհուրդ . . .։ Ամէն դէպէ հրաշալիքիւն մեծ է և միշտ կը գտնուինք մեծ աշխարհի մը կեղրենք։ Բայց վարժուելու ենք ապրիլ նորածին կրեշտակի մը, սիրող կնոջ մը կամ մահամերձ մարդու մը պէս։ Եթէ գիտնայիք որ պիտի մեռնիք այլ իրիկուն կամ պարզապէս պիտի հեռանաք առ յաւէտ, պիտի տեսնէիք վերջին անգամ մըն ալ, էակներն ու իրերն այնպէս ինչպէս տեսած էք մինչ այդ, և պիտի չսիրէիք այնպէս ինչպէս երբեկիցէ չէք սիրած։ Արդեօք երեւոյթներուն բարիքը կամ չարիքը պիտի ծաւալէիք ձեր շուրջն Արդեօք հոգիներուն գեղեցկութիւնը կամ տգեկութիւնը նշմարելու չնորհը պիտի ունենայիք։ Արդեօք ամէն ինչ մինչեւ իսկ ցաւն ու տառապանքները, չե՞ն փոխակերպուիք, այն ատեն, քաղցը-րալի արցունքներով սիրոյ մը։ Արգեաք իւրաքանչեւր առիթ ներսումի ինչպէս ըստ է իմաստուն մը չի՞ բանար բան մը բաժանման կամ մահուան գանոնութենէն։

Բարերախտ են անոնք որոնք խորհեցն, խօսեցն և գործեցին այնպէս մը

որ արժանացան հաւանութեանը մահաւ մերձներու, կամ հաւանութեանը անոնց՝ ուրոնք յստակատես են դարձեր մե՛ծ վիշտի մը մէջ:

Նթէ ապրած էք նսեմ գեղեցկութեան մէջ, մի՛ տիրիք. գերազոյն արդարութեան ժամբ վերջապէս միշտ պիտի հնչէ ամէն մարդու սրտին մէջ. և դժբախտութիւնը կը բանայ աչքերը որոնք երբեք պիտի չը բացուէին:

ԱՄԿՐ ոչ միայն կը գեղեցկացնէ անհետան ձեւերը, այլ կու տայ աւելի գեղեցիկ ձեւ մը կեանքին։ Այնպէս ալ, ամէն անհուն խորհուրդ կը գեղեցկացնէ կեանքը։ Բայց պէտք չէ խարուիլ։ Ամէն մարդ ունի ազնիւ մտածումներ, որոնք կ'անցնին իր սրտին վրայէն սպիտակ թբռչունենքրու պէս։ Աւաշղ կարեւորութիւն չի տրուիր անոնց, իրբեւ օտարականներ զարմանքով կը դիտուին և մէկդի կը նետուին արհամարհական շարժումով։ Որպէս զի հըրեցտակներու հոգիներուն նման մերինն ալ ըլլայ լուրջ և խորունկ, բաւական չէ միայն վայրկեան մը տեսնել տիեզերքը մահուան կամ յաւիտենականութեան շուրջին մէջ, ուրախութեան լոյսին տակ կամ գեղեցկութեան և սիրոյ բացերուն առջեւ։ Ամէն էակ ունեցած է այդ վայրկեաններէն որոնք թողած են միայն անօգուտ ափ մը մոլիրի։ Բաւական չէ պատահմաւնք մը, անհրաժեշտ է աւակութիւն։ Սովորութիւն գարձած գեղեցկութեան եւ լրջութեան կեանքը ապրելու պէտք է վարժուիլ։ Կեանքին մէջ վատազոյն էակները կատարելապէս կը զանազաննեն կատարելի ազնիւ և գեղեցիկ բանները որոնք, ասկայն, ըստ բաւականին ներուժ չեն։ Աներեւոյթ և վերացական այդ ոյժն է որ պէտք է ջանանք աւելցնել ի յառաջազունէն։ Եւ այդ ոյժը կ'աւելնար միայն անոնց մէջ ուրոնք սովորութիւն ըրած են նստելու, աւելի յաճախ քան ուրիշներ, այն կատարեներուն վրայ ուր կեանքը կը նուաճէ հոգին և ուրկէ կը տեսնէ որ ամէն արարք, ամէն խորհուրդ կապուած է անվրէպ՝ միծ և անմահ բանի մը...։ Կեանքը ձեւափոխելը այն այնու, կարեւոր չէ օրքան զայն տեսնելն ու ըմբռնելը, որովհետեւ երբ ըմբռնուած է իսկութիւնը կեանքին արդէն իսկ սկսուած է անոր ձեւափոխումը։ Այս

մտածումները՝ որոնց մասին կը խօսիմ, կը կազմեն թագուն գանձը հերոսութեան, և այն որը երբ կեանքին ստիպեալ կը բանանք այդ գանձը, կը մնանք զարմացած գտնելով հոն այն ոյժերը միայն որոնք մեզ կը մզեն կատարեալ գեղեցկութեան։ Ա՛լ հարկ չկայ, այն ատեն, որ մեծ թագաւոր մը մեռնի մեզի յիշեցնելու համար ուր աշխարհ չի վերջանար տուներու գռներուն, և փոքրագոյն բանն իսկ բաւական է ազնուացնելու հոգի մը ամէն իրիկուն։

Բայց չի բաւեր ըսել թէ Աստուած մեծ է և թէ դուք կը շարժիք Անոր լոյսին տակ, որպէսի ապրիք գեղեցկութեան և բեղուն կատարելութեան մէջ ուր ապրեցան հերոսները։ Կարելի է որ յիշէք, տիւ և գիշեր, թէ բուլոր աներեւոյթ ուժերու ձեռքերը՝ անհամար ծալքերով վրանի մը պէս, կը շարժին ձեր գլխին վերեւ, և դուք երբեք չէք նշարեր նուազագոյն շարժումն այդ ձեռքերուն։ Պէտք է խիստ ուշադիր ըլլալ, և աւելի լաւ է արթուն թեալ ու հակել հրապարակին վրայ քան քննանալ տաճարին մէջ։ Գեղեցկութիւն և մեծութիւն կայ ամէն ինչի մէջ, որովհետեւ անակնկալ առիթ մը բաւ է զանոնք մնդի ցուցնելու։ Շատեր գիտեն այդ, բայց որքան ալ դիտանան, բախտին և մահուան մտրակին տակ միայն կը թափառին դոյութեան պատին շուրջ ճեղքեր փնտուելու ի խնդիր Աստուծոյ։ Չեն անգիտանար որ յաւիտենական ճեղքեր կան հիւզի մը իրենուկ պատերուն մէջ, թէ փոքրագոյն լուսամուտներն իսկ չեն զեղչեր զիծ մը կամ աստղ մը երկնի անհունութենէն։ Բայց բաւական չէ ունենալ ճշմարտութիւն մը, իարկ է որ ճշմարտութիւնը մեզ ունենայ։

Եւ սակայն կ'ապրինք աշխարհի մը մէջ, ուր չնչին գէպքեր գիւրաւ կը զգենուն գեղեցկութիւնը մը որ աւելի ու աւելի կը բիւրեղանայ և կը վսիմանայ...։

Պէտք է ապրիլ գարանակալ հետամբռտելով Աստուծոյ, զի Աստուած թագուն է։ Բայց անդամ մը որ ծանօթանանք իր հընարագիտութեանց, անսնք կը դառնանք քալցրածափիտ և շատ պարզ։ Ոչինչ բան մը, յետ այնու, մեզ կը յայտնէ իր ներկայութիւնը, և մեծութիւնը մեր կեանքին կախում կ'ունենայ լաւ քիչ բանէ։ Այսպէս, կը գտնուի, բանաստեղծներուն մօտ,

տող մը որ կը թուի բանալ յեղակարծօրէն հայց այդ չէ կարեռը։ Մեզ պարուրող ողեղէն մթնոլորտը փոխուելու է՝ այն ասա տիճան որ նմանի Սվենպօրկի ոսկեգարեան գեղեցիկ երկրի մթնոլուախն ուր ոգք չար- տօներ սուտին բերնէն ելլել։ Այն ստեն կը պատահի որ ընել ուզած փոքրագոյն չարիքը իշխայ կապարի մը պէս սոգքուուդ տոշե, և որ գրեթէ ամէն ինչ փոխուի, առանց մեր գիտութեան, գեղեցկութեան, սիրոյ և ճշմարտութեան։ Բայց այդ մըթ- նոլորտը կ'ողողէ միայն անոնք որնք ի- րենց կեանքը յաճախ օգաւորելու հոգն ա- ռած են՝ բանալով երբեմն, դուները անդե- նականին։ Այդ գոներուն մօտն է որ մար- դիկ կը տեսնեն, կը սիրեն։ Որովհետեւ սի- րել իր գրացին չի նշանակեր միայն՝ ամ- բողջավին նուրիուիլ անոր։ ծառայել, օգ- նել և օժանդակել այլոց։ Կարելի է որ չը- լաք ոչ բարի, ոչ գեղեցիկ, ոչ ալ ազնիւ մեծագոյն զոհողութեանց մէջ, և ժանտախ- տաւորի մը սնարին քով մեռնող դժութեան քոյր մը թերես ունի հոգի մը սխակալ, պղտիկ և թշուառական։ Սիրել իր մեր- ձաւորը նորապէս, կը նշանակէ սիրել ինչ որ կայ յաւիտենական այլոց մէջ, զի գե- րազանցապէս մերձաւորն այն է որ աւելի կը մօտենայ Աստուծոյ, այսինքն ինչ որ կայ մարդոց մէջ անապական և բարի, և վերոյիշեալ գոներուն մօտ միշտ մնալով է որ պիտի տնտէք ինչ որ կայ երկնային հո- գիներուն մէջ։ Այն ատեն պիտի կրնաք ըսել մեծ Յովհաննէս Պօղոսին հետ՝ աԵրբ կ'ուզեմ սիրել քաղցրօրէն թանկափին անձ մը, և ներել իշխն ամէն բան, բաւական է որ գիտեմ զինք պահ մը՝ լուռ։ տեսնել սորվելու է սիրել սորվելու համար...

Այս երկար գարձուածքէն ետք, կը վերադառնամ չուկէտին։ ԱԱնուշ է յիշե- ցնել մարդոց որ իրենց մէջէն ամէնէն յո- նարկն իսկ կրնայ քանդակել, իր ընտրութե- նէն անկան երկնային նմոյշի մը վրայ, մեծ բարոյական անձնաւորութիւն մը՝ բաղկա- ցած՝ հաւասար մասերով՝ իրմէն և իտշա- լէն։ Արդ, այս Հմեծ բարոյական անձնա- ւորութիւնը՝ քանդակուած է կեանքի իրը- ստութեան մէջ, և անհրաժեշտ նկատուած գաղափարին պահեստը կ'աւելնայ միայն անդարցում ԱԱստուածայինի յայտնութիւն- ներուա չնորհւ։ Ամէն մարդ կրնայ մատ- չի հոգեպէս առաքինի կեանքի բարձունք- ներուա և ամէն տան գիտնալ իր ընելիքը՝ ապրելու համար որպէս հերոս կամ սուրբ։

Բարեբախտաբար ամէնէն քիչ տեսնել գիտցողներուն մէջ իսկ կայ բան մը որ կը գործէ լուռթեամբ իրրե թէ տեսած ըլլար։ Կարելի է որ բարի ըլլալ նշանակէ՝ ըլլալ քիչ մը պայծառութեան մէջ . . . ահա թէ ինչո՞ւ օգտակար է մարդուն բարձրացնել իր կենցաղը և ձգախի կատարներուն ուր կը հասնի չարագործելու անկարելիութեան։ Ահա թէ ինչո՞ւ օգտակար է վարժեցնել աշ- քը դիտելու եղելութիւններն ու մարդիկն աստուածային մթնոլորտի մը մէջ։ Բայց այդ իսկ անհրաժեշտ չէ . . . կ'ապրինք աշ- խարհի մը մէջ ուր ճշմարտութիւնը կ'իշխէ ամէն բանի վրայ, և ուր ան չէ, այդ սուր-

որ կը կարօսի բացատրութեան։ Եթէ ձեր
եղբօր երջանկութիւնը ձեզ կը տիրեցնէ,
մի՛ արհամարէ՛ք գուշ ձեզ, երկար փնտուե-
լու հարկ չկայ գտնելու համար ձեր անձին
իսկ մէջ բան մը որ չի տիրիր եւ եթէ չի
փնտուեք, հոգ չէ, կայ անպայժման բան մը
որ չէ տիրած։

Աստուծոյ մասին չխորհուներն ալ
խորհուներուն պէս տէր են ճշմարտութեան
որ, այս պարագային, սեմէն քիչ մը հե-
ռու կը գտնուի. և այդքան ունենաւնէն հա-
սարակ կեանքին մէջ իսկ, կ'ըսէ թընան,
Աստուծոյ համար կատարուածին բաժնը
մեծ է։ Ամենէն ստորին մարզը կը սիրէ
աւելի արգար ըլլալ քան անարգար, ա-
մէնքս կը պատտենք, կ'ազօթենք՝ օրական
շատ անգամներ, անզիտակցարաբար, եւ կը
զարմանանք երբ դիպուած մը մեզ կը
յայտնէ յանկարծ կարեւորութիւնը ստո-
ւածային այդ բաժինին։ Մեր շուրջ, ի-
րենց բովանդակ գոյութեան ընթացքին
գեղեցիկ ոչինչ տեսած, հազարաւոր խիզ-
ներ կան որոնք կ'երթեւեկեն մութին մէջ։
կարծես ամէն ինչ մեռած ըլլայ. ոչ ոք
ուշադրութիւն կը գարձնէ։ Եթեայ, որ մը,
պարզ խօսք մը, յեղակարծ լուսթիւն մը,
պղտիկ արցունք մը գեղեցկութեան աղ-
բիւրներէն ծորող, մեզ կը սորվեցնէ որ
անոնք գտած են բարձրացնելու միջոցը,
իրենց հոգին միութեանը մէջ, իտէլ մը
բիւր անգամ աւելի գեղակերտ քան գե-
ղեցկագոյն բաները զորս լսած և տեսած
ըլլան։ Շուքի և լուսթեան ո՞վ վեհ ու
տժոյն իտէլներ, գուշ մանաւանդ կը
կենանացնէր, ժամանակ հրեշտակներուն
և ուղի՞ղ կը բարձրանաք Աստուծոյ։ Ո՞նք ան-
համար հրեշտակներուն, թշուառ սենեակնե-
րուն, թերեւս բանաերուն մէջ, այս պա-
հուն, ձեզ չեն սնուցաներ մարդիկ ար-
ցունքով, գտագոյն արիւնով հէզ հոգիի մը
որ երբեք չէ ժամեր. ինչպէս մեղուները,
այն ատեն իսկ երբ ծաղիկներն ամէն թոշ-
ներ են իրենց շուրջ, կը մատուցանեն
տակաւին անոր որ իրենց թագուհին պիտի
ըլլայ, մեզը մը բիւրապատիկ աւելի թանկ
քան այն որ կու տան հանապազօրեայ
կեանքի իրենց ցոյրերուն. . . Մեզմէ ո՞վ
չէ հանդիպեր, մէկէ աւելի անգամներ,
կեանքին ընթացքին, լքուած հոգիի մը՝
որ սակայն չէ կորսնցուցած դիեցնելու

ԿՐՕՆԱՊԱՏՄԱԿԱՆ

ՆԱՐԵԿԸ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷԶ

ԳԻՐՔԸ

Նարեկացիի գործերուն մէջ ամէնէն
նշանաւոր ազօթամատեանն է, հոչակա-
ւոր նարեկացիի կեանքին վերջալուսային բոցավառումն է։ Նարե-
կացիէն մեզի հասած միւս երկերը, զան-
ձեր, տաղեր, ներբոյիներ և մեկնուրիւնը,
բացի ողբերգութեանէն և քանի մը տաղե-
րէն, նիւթով և ձեւով տարբերութիւն չու-
նին ժամանակի նման սեներէն։ Միշտ է թէ
իր մեկնողական և ներբողական գրութիւն-
ներու մէջ, որով չափով կը զգացուի բա-
նաստեղծական շունչ և քնարարան զեղում-
ութափ, բայց անոնք կը մնան պարտա-
գիր նման նիւթերու մշակման եղանակին։
Նարեկը կը բաղկանայ 95 ազօթքնե-
րէ, արոնք երեմեմ հաւատոյ հանգանակի,
յաճան խորհրդագութեան և երբեմն ալ
խրատի նկարագիրներ կը ստանան, կոտրե-
լով սակայն միշտ դասական կաղապարը,
ընկալեալ ձեւերը, դառնալու համար շեշտ-
ութէն անձնական վկայութիւն։ Հակառակ
ասոր սակայն, անոնց բոլորին ամէնէն ու-
շագրաւ և հասարակաց յատկանիշերէն մին-
է նիւթի, շարժառիթի և տեսակէտի նոյ-

քաջութիւնը, այդպէս, խաւարին մէջ, ա-
ւելի երկնային, աւելի անապատական
խորհուրդ մը քան ամէն այն խորհուրդնե-
րը զորս այնքան ուրիշներ առիթն ունե-
ցեր են ընտրելու լոյսին մէջ։ Հոս, գար-
ձեալ, Աստուծոյ սիրական ստրուկն է
պարզութիւնը. և բաւական է թերեւս որ
քանի մը իմաստուններ չանգիտանան կա-
տարուելիքն որպէսդի մնացեաները գոր-
ծեն այնպէս իրը թէ գիտէին հաւասա-
րապէս . . .

Թբգմ. Ալբրիդի

M. MAETERLINK
(Le Trésor des Humbles)

նութիւնը, այնքան որ ընթերցողը եթէ նկատի չունենայ արտայատման զանագաւ նութիւնը և ոճի ելեւէջքը, կրնայ գանգատի տիրող միօրինակութենէն։

Նարեկացին իր հետաքրքրութեան եւ խորհրդածութեան արժանի մէկ բան ունի, ատիկա հոգիին փրկութիւնն է, զոր պէտք է ապահովել զջումով և ապաշխարութեամբ։ Ինչ նիւթով և տրամադրութեամբ ալ սկի, իր գրիչը անդիմադրելիօրէն կը հակի դէպի զջում, կողմացոյցի ասելին պէս, որ կարգ մը տատանումներէն վիրջ կը գառնայ դէպի հիւսիս։

Ցեառոյ անիկա գիրքին սկիզբէն մինչև վերջը կը տառապի ծրագրի մը պակասէն, յատկանիշ մը որ յատուկ է առաւել կամ նուազ չափով բոլոր հին նման գրողներուն։ Նիւթը չի նորոգուիր, իսկ ալօթքները կը շարունակուին առանց որոշ ըստորարաժանումի և կարգի։ Նարեկի մէջ ամէն ինչ ներեցչական է կարծես և ոչինչ ծրագրուած։ Գլուխ առ գլուխ իրարու կը հետեւին նոյն հանդիսաւոր վերտառութիւններով՝ «Վերստին յաւելուած», կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի։ Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ։ Նոյնպէս գիտակցաբար, կարծես ներքին ոյժէ մը մղուած, նարեկացին օրէ օր իր շարադրած այս մաղթանքներուն վրայ հատ մըն ալ կ'աւելիցնէ, նախորդ օրուան թախանձագին, արտասուաթոր հեծութիւնը կը կրկնէ, և Աստուծոյ գուռը ափ կ'առնէ Անոր հետ սիրտ սրտի խօսելու համար։ Այսպէս միակ նըպատակի մը և իշխի մը բռնութեան յանձնուած մէկը, շատ բնական է չխորհի այն դասաւորումներուն՝ որոնք անհրաժեշտօրէն կը պահանջուին։

Հակառակ ասոր սակայն, իր մտքին իշխող զաղագիքը, մտասեւեռումը, կը ստեղծէ ձեւերու, բացատրութիւններու խելայեղ այլազանութիւն մը։ Արագ ընթերցողի համար ելեւէջը, նուազը և ներշնչումը ու մոնչող ողին, կ'առինքնեն ու կը գահաւածեն զինքը, իսկ եթէ մէկը մըտաքրութեամբ վերծանէ, միխթարութիւն միայն կ'ունենայ իմաստին նոխ և ստուերու ծոցը միաբնուելու։

Նարեկացին հաւատքի գարուն մարդնէ, և հետեւաբար իր միտքը միշտ թարմ

ու բեղուն է աղեղի մը պէս պրկուած։ Ան Աստուծոյ հետ կը խօսի դէմ առ դէմ, ծունկ ծունկի, ինչպէս կ'ըսէին հիները։

Նարեկացին բանաստեղծական հզօր խառնուածք մըն է, հրայրքու, ջղուտ, խիզախ և թափանցող երևակայութիւն մը՝ որ կեանք և կերպարանք կուտայ իր մըտածումներուն։ Հմուտ, գիտուն և աստուածաբան, բայց այդ մասին չի խօսիր, զինք տիրապետող գաղափարը հոգիի և մեղքի արիւնոտ կոիւն է և վերջնական փրկութիւնը, որ իր գրչին ներքեւ և բոցավառ երեւակայութեանը մէջ կը հայի, կը տարրալուծուի, և անկէ բիւրեղացած արդիւնքին մէջ կը տեսնուին բնութենէն փոխ անուած գոյներն ու միտքերը, Ս. Գրքի հայթայթած ոսկեղնիկ դասերն ու նմանաբանութիւնները և լաւ մարսուած աստուածաբանութեան մը անսայթագ վընկունքը։ Նարեկացին չի ստրաբաժներ նիւթը, բայց կը տեսնէ զայն իր բազմազն տարրերուն մէջ։

Նարեկացիի վարդապետութիւնը իր պատկանած եկեղեցիին վարդապետութիւնն է։ Աստուծոյ գոյութիւնը իրեն համար աներկայելի և հմայիչ, կենսական ճշմարտութիւն մըն է, և ալօթքը՝ ներքին հարկ մը։ Իր ալօթքը առ Աստուծուած ուղղուած իղձամբ չէ, այլ հոգեպէս չօշագիբելի անձնաւորութեան մը հետ գրական խօսակցութիւն մը։ Անոր համար իր ալօթքները խօսք ընդ Աստուծոյին և ոչ ո՞չ ո՞նոք առ Աստուծուած։ Աստուծոյ տուած իր մակդիրներէն կարելի է չինել իր լացքը Գերագոյնին մասին։ Տուիչ պարզեւաց, իննաբարու բարի, անենին, անեղ, անիմանալի, աննառնի, անզնենիլի, անօօւիկելի, անեամանդաղ զիտուրին, աներկեւան տեսուրին, անսկիզբ, անստուեր ծագումն, հօմարիս եականուրին, ինստական գաղափարին, եւայլն։ Ու տակաւին ծածկութիւն առ առողջուրին, աննախան պատիւ, աներեւոյր շաւիղ, եւայլն։

Լեզուն՝ յորդ է և ճոխ։ Գալով իր ունին, Նարեկացին, ինչպէս կ'երեւի, գիտակցօրէն հետապնդած է ոճի մոգական գաղտնիքը։ Անիկա հետեւակ մաքրապաշտ մը չէ որ կը գոհանայ վերաբաղբեկով հին վարպետները։ Իր շեղումը դէպի ժողովը դային լեզուի մշտաբուխ աղբերը՝ ուրիշ

առաւելութիւն, մնը երանգաւոր և ճնխ, բայց նուազ յղկուած է և կատարեալ։ Պատճառսը իր խրթնութիւններուն ու մըթութեան, գուցէ իր խորհուրդներու անկառավարելի բազմութիւնը, ներշնչումի անզուսպ խուռաւմը, ոգացումներու ըզգըլխանք, չենք գիտեր, ոսկայն ոչ ոք կանգ կ'առնէ գիտելու ասոնք, իր անվախումի արշաւին մէջ և բռնակալ գեղեցկութեան թափին տակ։

Նիւրը. Դիրքքեւ լաւ կարենալ ընդգրկելու համար՝ անհրաժեշտ է ճանչնալ զայն լեցնող անձերն ու աշխարհները։ Ասուածութիւն, ամէնչն շատ յաճախուած անունը աղօթամատեանին, նարեկացիին համար իմացական յղացք մը և մնալանցական գիրացում մը ըլլալէ հեռի է և գրեթէ միշտ իրական, գիտեթէ շօշափելի, տեսանելի ըզգայնութիւն մը, արտայայտութիւն մըն է, վերագիրներու անհուն տարափով և պատկերներու անսպառ տորմիով որակուած, ճշուած և մօտեցուած մեր մեղքերուն և ցատերուն։ Ս. Գրքին բոլոր դրուանները Անոր փառքին համար, տողի մը, աւելի յաճախ, պարզ ածականի մը կը վերածուին Երկնքին և Երկրին բոլոր զօրութիւնները շարժումի կը հանուին անոր ոյժ պարզեւու և մարդոց նոգիին բոլոր ալքերը ակ'արօրատադրուին անոր սրբազն սարսուոր կիւրընկալելու համար։

Անհասանելի այդ բարձրութեան և թըզուկ, տիզմ որ փոշի մարդուն դէմ, առ դէմ քալւ, որ քրքին կու տայ անկարելի եղեաբականութիւն մը, որ գերազանցապէս մարգկային և յուզի կ'ընէ իր Աստուծոյն հետ ի խորոց սրտի եղած այս խօսակցութիւնը։ Ասուածամօր նուիրուած է ամբողջ գլուխ մը նարեկի, ինչպէս նաև գրքին մէջ ուրիշ տեղեր անոր միջամտութիւնը և բարեխօսութիւնը կը հայցուի։ Նարեկացին կը մօտենայ Աստուածամօր շաբականներու մէջ Ս. Կոյսին եղած տարփուանքի լեզուով և պատկերներով։

Այդ նմանութիւնները, մեծաւ մասսամ, իմացական ծագում ունին։ Բայց նարեկացիին մօտ իմացականութիւնը գժուար է զատել զգայնութենչն կրօնական բարձրագոյն յղացքները իր մօտ կը վերածուին գրեթէ նիւթական զգայնութեան։

Երկնայինները. — Նարեկացին հակա-

ռակ իր ահագնային երեւակայութեան, համեմատաբար քիչ կը խօսի միջնորդ ու պահապան այս էակնիրու մասին։ Գրքէն միան զլուխ մը բացառարար նուրիրած է անոնց։ Մինչդեռ արեւմտեան ազգերու գրականութեանց մէջ՝ երկնային այս զօրս քերը կարեւոր զեր ու ծաւալ ունին, Ցանք, Թասօ, Միլսոն, Միսրիիները այնքան ուշադրութեամբ կը վերաբերին անոնց հետ որքան սատորանկանչներուն։

Սատանան եւ իր բանակները. — Երկնայիններուն հետ կարձառօտ՝ Նարեկացին Զարին ու անոր ուժերուն կ'ընճայէ մասնաւոր ու զարմանալի կարեւորութիւն։ Անչուշու Ժանթէի զծած գժբախտ գեղեցկութեամբ նշանաւոր տիպարը չէ անոր սատանան։ Նարեկացիին, վերացեալ ըմբռնում մըն է, զուտ սատուածանչական։ Հակառակ ասոր սակայն անոր բանակներուն ոյժքը անդիմադրելի է և ամէնուրեք։ Անապատականի մատայնութեամբ կը բազմապատկուին ճգնաւորներու առ աչօք տեսլիները, փորձութիւնները, զգայախարսութիւնները ստեղծելով ճնշում մը գրքին մէջ, որ գիւրին չի փարատիր հակառակ լոյսին հզօր ներագեցութեանը։

Նարեկացիին և այս չար ուժերուն յարաբերութիւնները գրքին մէջ, կը ստեղծեն մոռայլ բայց ամէնչն գեղեցիկ ու սրտառուչ էջերը, վասն զի ան մասնաւոր հաճոյքը ունի այդ պայքարը փնտուելու, պատմելու, երեւակայելու նոյնիսկ։

Մարդը. — Նարեկացիին համար մարդը ըմբռնում մըն է։ Անոր համար մարդկութիւնը գերազոյն տիպոս մըն է, որ խնայութաց առյունիսկ երկնայիններուն։ Եւ որուն յօժերեցաւ սակայն հազորդուիլ Աստուծածինը, իր երկրորդ դէմքով։ Իր բոլոր մեղքերով և անկամներով մարդ կոչումը նախանարելի է հրեշտակներէն, որոնք իրը յօրինում ալ վար կը մնան, քանի որ աննացմէ առնուած է լիբերարիա կարողութիւնը։

Մեղադար. — Բայց խորապէս վճռական կնիքով մը գծուած է մեղաւորին ըմբռնումը։ Գիրքը անոր վրայ կը կրթի։ Արդէն վերնագիրն է «Ողբ պաշշարողի» բարացուցական բացառութիւնը։ Նարեկացին իր տաղանդին անորակելի մեծութիւնը փորձած ու փորձած է այս

մտապատկերը աւելի հզօր՝ աւելի թելադրող և կատարեալ ընկու համար, Օգտագործած է եկեղեցական մատենագրութեան բոլոր ասութիւնները՝ որոնք մեղքը կը տարագեն, և անոնց վրայ աւելցուցած նորերը, որոնք իրենց յանդգնութեանը մէջ գարշանքի նոր ստեղներ կը շարժեն:

Մեղաւորը ամէննէն ընդհանուր տիպարն է գրքին: Զեյ գլուխ մը ուր անիկա մուտ գտած չըլլայ, ու նոյնպէս էջ մը՝ ուր անիկա տիրապետող չդառնայ: Անկէ կը մեկնի գրեթէ միշտ, իր լացն ու կոծը, ճնճճերումը տրամադրելու համար աստուածեան մաքրութեան: Եւ կիրքերու անհուն սանդուխ մըն է որ զինքը կ'առաջնորդէ դէպի տեսիլքին հզօր հըրապոյը:

Նոյն իսկ երբ ինք երկինքը կ'երեւակայէ, տարօրինակ է որ մեղքերը սեւ ծանրոցներու նման կափուխն իր մաքին թեւերէն: Մեղքը նմանցուած է ծովին, մեր սրբազն մատենագրութեան այնքան ախորժած ծովը:

Արդաւը տժգոյն է, չունի մեղաւորի զրական ախպարին մասնայատկութիւնները: Նարեկացին մեղաւորը մեղքին հոծ իրապաշտութեամբը զօրացած խորհրդանշան մըն է, մինչքեռ անոր հակապատկեր՝ արդարը տարտամութիւն մըն է, և չունի միսթիքներու մօտ պատկերացուած երանաւէտ տիպարին քաղցրութիւնը, ողովուած երազին ճառագայթումովը:

Ապածխարանք. — Նարեկացին համար այս վիճակը անհուն ողը մըն է, սակայն քաղցրացող միշտ յոյսին թեւովք: Ամէն վայրիւան ներկայ է անոր միստիքին մէջ կիմական սա գաղափարը թէ՝ որքան ալ մէծ ըլլայ մեր մեղքերուն ալիքը, միշտ աւելի մէծ է Աստուծոյ սիրոյն ապաւէնը: Յոյին առասանը կախուած է ամէնուրեք մեղքի ճամբաններուն:

Նարեկացին զիտէ թէ անկեալ էակը մասնիկն է գերազայնին, և իր պարտքն է ըսկել թէ ալտուած, մեղքերով սեւցած այդ աստուածային զիծը ինչպէս պէտք է վերածել իր նախկին մաքրութեան: Զինուած այս զիտակցութեամբ, անիկա անդադր իր հոգիին ու մարմին մերկութեանը վրայ կը չաչէ զջջումին կրակ մտրակները, մինչեւ որ հալի աղոտը, և մարդը կարինայ

վերադառնալ անհուն աղբիւրին, որ Աստուծոյ չունչն է.

